ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 սեպտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

117
(2967)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՊԵՍ ՕԳՆԵՑԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ «ՔՐԵԱԿԱՆՆԵՐԻՆ»



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգի ներկայացուցիչները իջել են իրենց «բարձունքից» եւ գնացել Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի տուն ու օգոստոսի 26-ին տեղի ունեցած միջադեպի գործով պարզաբանումներ պահանջել:

Հիշեցնենք, որ Աշտարակ քաղաքում հայտնի «Նվոյին» պատկանող Wine Corner Ashtarak-ում քաշքշուկ էր եղել: Օգոստոսի 26-ին «Հրապարակ»-ը գրեց, որ Hayat Project-ի համերգի ժամանակ, որին ներկա են եղել նաեւ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, Աշտարակի քաղաքապետ Թովմաս Շահվերդյանը, ներկա է եղել նաեւ «օրենքով գողի» զարմիկը, որի հետ պաշտոնյաները վիճաբանության մեջ են մտել այն բանի համար, որ պատվիրել են երգ՝ Вот такая доля воровская-ն, ու մարզպետը ընդիմացել է՝ ասելով. «Ես այստեղ, դու ինչ-որ գողական ե՞րգ ես պատվիրում»:

Եվ ահա, իրավապահները նրանից հետաքրքրվել են, թե ինչ ծեծկռտուք է տեղի ունեցել: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ մարզպետ Մովսիսյանը երդումներ է տվել, թե ընդամենը լեզվակռիվ է եղել ոչ թե ծեծկռտուք:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ միջադեպի գործով 30-ից ավելի անձանց են այս օրերին տարել հարցաքննությունների՝ միջադեպի մանրամասները պարզելու համար:

ՀՀ քննչական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ գործով քրեական վարույթը շարունակվում է:

Հատկանշականն այն է, որ իրավապահները «օրենքով գողի» զարմիկին շտապ բերման ենթարկեցին, իսկ ահա ՔՊ-ի «սրտի» պաշտոնյաները՝ ի դեմս Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի եւ Աշտարակի քաղաքապետ Թովմաս Շահվերդյանի, կրկին մնացին անպատիժ. մարդիկ, որոնք պարտավոր էին հասարակական վայրերում պատշաճ վարքագիծ դրսեւորել:

Հիշեցնենք, որ Աշտարակի քաղաքապետ Թովմաս Շահվերդյանն ու այլ ՔՊ պաշտոնյաներ հայտնվել են աղմկահարույց միջադեպերի կիզակետում, սակայն միշտ ջրից չոր են դուրս եկել, իսկ հիմա էլ մարզպետն է մի երգի համար ռեստորանում կռիվ հրահրել ու շարունակում է մնալ անպատիժ, ավելին՝ իրավապահներն են նրան այցելում:

Իսկ ինչո՞վ է իրավիճակը տարբերվում նախկին «լիսկաների» ժամանակներից. Արագածոտնի մարզում «լիսկաները» գլուխ են բարձրացրել ու իրավապահների տեսադաշտից դուրս են մնում մինչ օրս, փոխարենը քրեական աշխարհի ներկայացուցիչներն են առաջնահերթ ձերբակալվում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Կարմիր սարը, ունենալով կրաքարի պաշարներ, հայտնվել էր միաժամանակ մի քանի հանքարդյունահանողների ուշադրության թիրախում՝ «ՄԼ մայնինգ» ՍՊԸ, «ԴԻԳԸՆԴԻԳ» ՍՊԸ, «ԳՌԱՆՈՒԼՍ» ՍՊԸ, «ՕՐԴ» ՍՊԸ, «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ: Այս ընկերությունների իրական շահառուները կառուցապատողներ են կամ փոխկապակցված անձինք: Հիմա էլ նրանք փորձում են տիրանալ սարին՝նախատեսելով Վեդիի վարչական տարածքում ցեմենտի գործարանի կառուցում, որից հետո հարակից գյուղերը փոշու եւ ցեմենտի մեջ են հայտնվելու: Տուժելու են գյուղատնտեսությամբ հայտնի մի քանի գյուղեր՝Այգեզարդ, Քաղցրաշեն, Գինեվետ, Նոր ուղի գյուղերը: Վեդիում ցեմենտի նոր գործարան կառուցելու ու Կարմիր սարը որպես հանք շահագործելու լուրերը հանգիստ չեն տալիս հարակից գյուղերի բնակիչներին: Դեռ հուլիս ամսին հասունացած այս աղմուկից հետո ընկերությունները չեն հասել իրենց ուզածին: Այգեզարդ համայնքում փաստացի բնակվող բնակիչների մեծամասնությունը դեմ է հանքի հնարավոր շահագործմանը: Չնայած բնակավայրում երեք հանրային լսում է կազմակերպվել՝շատերն այդ մասին իմացել են միայն այն ժամանակ, երբ դրա դեմ ստորագրահավաք է սկսվել: Հավաքվել է 2300 ստորագրություն: «Կանաչ Հայաստան» ՀԿ նախագահ Թեհմինե Ենոքյանը, ով դեմ է արտահայտվել այս որոշմանը, պնդում է, որ Կարմիր սարի տարածքում հանքարդյունաբերություն սկսելու նպատակով հանրային լսումները, փաստացի, կեղծվել են:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Օգոստոսի 20-ին «Նոա»-«Ռուժոմբերոկ» ֆուտբոլային ակումբների խաղի ժամանակ մարզադաշտի հոսանքազրկման պատճառը իշխանականներին փոխկապակցված ընկերության կողմից մարզադաշտի կառուցումն է: Այսինքն՝ իշխանության հետ ԽԾԲ-ի գործոնով կատարված գործարքները ոչ մի կերպ լավ ազդեցություն չեն ունենում: «Հետք»-ը գրել էր. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան (ՀՖՖ) 2021 թ.-ին կազմակերպել է Աբովյանի մարզադաշտի նորոգումը: Այն արժեցել է 783 միլիոն դրամ՝ 1.5 մլն դոլար, որը ֆինանսավորել է ՈՒԵՖԱ-ն: Մարզադաշտը վերակառուցել եւ նորոգել է մի ընկերություն, որը կապվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Իհարկե՝ՀՖՖ նախագահի քավորությամբ»: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մարզադաշտի վերանորոգման համար մրցույթին մասնակցել է եւս մեկ ընկերություն, որն առաջարկել է մարզադաշտը վերակառուցել 50 մլն դրամ էժան գնով: «Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ մարզադաշտի վերակառուցման մրցույթը հաղթելու գործում միջամտել է նաեւ Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը: Մենք Արմեն Փաբուխչյանից փորձեցինք ճշտել, թե անուղղակի կերպով ի՞նչ աղերսներ ունի Աբովյանի մարզադաշտը վերանորոգող ընկերության հետ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

2023 թվականի հունիսի 13-ին հայրենի իրավապահ համակարգը կասկածելի հանգամանքներում կոծկեց «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ին պատկանող «Շերեփ» ռեստորանում տեղի ունեցած միջադեպը. սակայն օրերս աղմկահարույց բարեկամական ճաշը փարատեց բոլոր կասկածները: Օգոստոսի 31-ին ՀՀ վարչապետի տիկին, «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Հակոբյանի անունից ճաշ էր մատուցվել՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների հասանելիություն/փորձի փոխանակում» խորագրով միջազգային համաժողովին մասնակցելու համար Կատարից ու ԱՄԷ-ից Հայաստան ժամանած հյուրերի համար: Ճաշկերույթին ներկա էին ԱՍՀ նախարար Նարեկ Մկրտչյանը, գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ԱՍՀ նախարարի տեղակալ Տաթեւիկ Ստեփանյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, ՄԻՊ Անահիտ Մանասյանը եւ նորօրյա օլիգարխ Դավիթ Երեմյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Yeremyan
projects

ԶՐՈՒՅՑ

«ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՏՆԱՀԱՐՎՈՒՄ Է»

Ներքին գործերի նախարարությունը շուրջօրյա հասանելիություն կունենա սրճարանների, ռեստորանների, դեղատների, հյուրանոցների, առեւտրի վայրերի, բենզալցակայանների եւ գազալցակայանների մուտք ու ելքին, կիեւեւի հանրային վայրերի անցուղարձին:

Նախարարությունը պարտավորեցնում է խոշոր տնտեսվարող սուբյեկտներին եւ ընկերություններին տեսանկարահանման սարքեր տեղադրել իրենց օբյեկտներում եւ ՆԳՆ-ի համար ապահովել շուրջօրյա ռեժիմով հասանելիություն այդ սարքերին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ նախկին պատգամավոր Արմեն Եղիազարյանը նշում է՝ նախագիծն ամբողջությամբ հակասահմանադրական է, եւ հորդորում է ընդդիմությանը դիմել ՍԴ՝ նախագիծը հակասահամանադրական ճանաչելու համար:

-Պարոն Եղիազարյան, անդրադառնալով կառավարության նոր նախագծին՝ պետք է նշել, որ այն ներքին գործերի նախարարությանը լիազորություններ կտա շուրջօրյա վերահսկողություն ունենալ հանրային վայրեր համարվող սրճարանների, ռեստորանների, դեղատների, հյուրանոցների եւ այլ հանրային վայրերի ելք ու մուտքերին: Դուք անդրադարձել էիք նախագծին եւ քննադատել այն: Ի՞նչ դիտարկումներ կանեք, քանզի սա, ըստ ամենայնի, առաջին հերթին մարդու իրավունքների խախտում է, բացի դրանից՝ լուրջ վնաս կարող է հասցնել տնտեսությանը:

-Կարծում եմ, որ այս նախագիծը շատ քիչ լուսաբանվեց եւ ինքս էլ պատահականորեն եմ իմացել այս նախագծի մասին: Այն բովանդակային առումով հակասահմանադրական է եւ համարում եմ՝ առաջինը հենց ՄԻՊ-ը պիտի անդրադառնար սրան, սակայն լռում է: Գիտենք, որ նա հիմնականում լռում է եւ զբաղված է իշխանական քարոզչությամբ: Այդ առումով ՄԻՊ-ի վրա հույս դնել հնարավոր չէ:

Կարծում եմ՝ այս մասին պիտի բարձրաձայնեին նաեւ Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավորները, որպեսզի այն հակասահմանադրական ճանաչվեր, ինչի համար պետք էր պատգամավորների թվի 1/5-ի ձայները:

Միգուցե բացակա են եղել այդ նիստին, բայց այս պահին տվյալ հարցը շատ լայն շերտերի է անդրադառնալու՝ բիզնեսից մինչեւ անձնական շփումներ: Այսինքն, երբ մենք հանդիպենք մեկի հետ սրճարանում, դա պետք է տեսագրվի, եւ չի բացառվում, որ մի օր էլ կարող է նաեւ ձայնագրվել, ինչը անձնական կյանքի իրավունքի ոտնահարում է: Բացի այդ, սա ոտնահարում է առեւտրային գաղտնիքի մասին օրենքը, որը նույնպես հակասահմանադրական է:

-Պարոն Եղիազարյան, մասնագետները մեզ հետ զրույցում մտահոգություն են հայտնում, որ շատ հանգիստ նաեւ այլ պետություններ, այդ թվում՝ թշնամի պետություններ, կարող են հասանելիություն ունենալ այդ ձայնագրություններին՝ ցանցահենային հարձակումների միջոցով:

-Մանրամասնելով ասեմ, քանի որ 2020 թվականի պատերազմի ընթացքում Ազգային ժողովում էինք որպես պատգամավոր եւ ավելի շատ հասանելիություն ունեինք գաղտնի ինֆորմացիային, այդ ընթացքում մեր կողմը կոտրում էր ադրբեջանական տեսախցիկների ինֆորմացիոն դաշտը եւ տվյալներ տրամադրում համապատասխան մարմիններին: Տեղի էր ունենում նաեւ հակառակը:

Ես այն ժամանակ առաջարկում էի, որ զորամասերի եւ հիվանդանոցների մոտակայքում գտնվող բոլոր խանութների եւ բիզնես կետերի անձնական հսկողության տեսախցիկներն անջատվեն, քանի որ դրանցով մեզ հետեւում էին: Այս դեպքում մեր ողջ երկիրը դնում ենք տեսախցիկների աչքի առջեւ եւ «մատուցում» այլ պետությունների: Չի բացառվում, որ թշնամիներից բացի՝ այլ պետություններ նույնպես դա օգտագործեն, քանի որ այսօր ամենաթանկ բանը ինֆորմացիան է. եւ չենք կարող ասել, թե ինչպես կկիրառվի այդ տեղեկությունը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ԻՐԱՆՈՒՄ ՌԴ ԴԵՍՊԱՆԻՆ ԿԱՆՉԵԼ ԵՆ ԱԳՆ

ՌԴ դեսպանին Իրանում կանչել են ԱԳՆ. պատճառը վերջին շրջանում Մոսկվայի կողմից ցուցաբերվող աջակցությունն է «միջանցքի» նախագծին, որը պետք է Ադրբեջանը Հայաստանի տարածքով կապի Նախիջեւանին:

Իրանը դեմ էր այն երթուղուն, որը Հայաստանի տարածքով կկապի Ադրբեջանի հիմնական մասը Նախիջեւանին: Այդ կապակցությամբ կայացել է Թեհրանում ՌԴ դեսպանի եւ Իրանի ԱԳՆ Եվրասիական հարցերով գլխավոր տնօրինության ղեկավար Մուջթաբա Դեմիրչուլուի հանդիպումը: Տեղեկությունը տարածել է Իրանի ԱԳՆ-ն:

Թեհրանում Ռուսաստանի դեսպանի հետ Դեմիրչուլուի հանդիպմանը բարձրացվել է կայուն խաղաղության երաշխավոր եւ տարածաշրջանում խաղաղության հիմք հանդիսացող երկրների ազգային ինքնիշխանության, տարածքային ամբողջականության եւ շահերը փոխադարձ հարգելու հարցը:

Դեմիրչուլուն նշել է, որ Իրանը աջակցում է տարածաշրջանում խաղաղության եւ կայունության վերականգնմանը, տարածաշրջանի երկրների համագործակցության զարգացմանը եւ դեմ է աշխարհաքաղաքական եւ միջազգային մակարդակով ճանաչված տարածաշրջանի սահմանների փոփոխմանը:

Հանդիպմանը մտքերի փոխանակություն է տեղի ունեցել կովկասյան գործընթացների, տարածաշրջանի երկրների խաղաղությանն ու կայունությանն աջակցելու, տարածաշրջանի երկրների միջեւ համագործակցության զարգացմանն աջակցելու, միջազգայնորեն ճանաչված սահմանների փոփոխությունների դեմ պայքարի շուրջ:

Կողմերն ընդգծել են նաեւ տարածաշրջանի երկրների հնարավորությունների օգտագործման կարեւորությունը՝ աջակցելու տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ամրապնդմանը եւ տնտեսական ծրագրերի իրականացմանը՝ հաշվի առնելով բոլոր կողմերի շահերը:

Քննարկվել են նաեւ «3+3» խորհրդակցական մեխանիզմի առաջիկա հանդիպումը եւ Իրանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ԿԱՆԱԴԱ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանից սեպտեմբերի վերջին խորհրդարանական պատվիրակություն է մեկնելու Կանադա:

Պատվիրակությունը կգլխավորի ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

«Ժողովուրդ» օրաթերթին ԱԺ-ից հաստատեցին, որ Կանադա այց նախատեսվում է առաջիկայում, սակայն օրերը եւ պատվիրակության կազմը դեռ հստակեցված չեն:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՎԱԳԱՆԻՆ ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏ ԿԳՈՒՄԱՐԻ

Հաջորդ շաբաթ Երեւանի ավագանին աշնանային նստաշրջանի առաջին նիստը կհրավիրի:

Նիստը կգումարվի սեպտեմբերի 10-ին՝ ժամը 10:00-ին:

Ինչպես քաղաքապետ Տիգրան Ավինյանն է հայտարարել՝ սեպտեմբերին ավագանին պետք է քննարկի եւ հաստատի Երեւանի նոր հատակագիծը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 9-ին էլ խորհրդարանն է աշնանային նստաշրջանի առաջին նիստը գումարելու:

ԱԿՑԻԱՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ԴԵՄ

«Մայր Հայաստան» ժողովրդական շարժումը ակցիաների շարք է սկսում՝ «Ո՛չ քաղաքային տրանսպորտի թանկացմանը», «Ո՛չ թալանին» խորագրով:

Հիշեցնենք, որ 2025 թվականի հունվարի 1-ից Երեւանի քաղաքային տրանսպորտը թանկանալու է՝ 100 դրամից հասնելով 300 դրամի՝ 1 ուղեւորափոխադրման համար:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը ներկայացրել է նախագիծ, որով քաղաքային տրանսպորտը մեկ ուղեւորափոխադրման համար մնալու է 100 դրամ, իսկ շատ օգտվելու դեպքում գինը կլինի 100 դրամից էլ ցածր: Թոշակառուների եւ հաշմանդամների համար, ըստ «Մայր Հայաստանի» նախագծի, քաղաքային տրանսպորտը կլինի անվճար:

«Մայր Հայաստան» ժողովրդական շարժման առաջին ակցիան կսկսի (խմբ.) սեպտեմբերի 3-ին՝ ժամը 18:00-ին, Արաբկիր վարչական շրջանի Սուրբ Խաչ եկեղեցու հարակից տարածքից:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ՝ ԻՐ ՔՐԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ես իմ նկատմամբ կատարվողը չեմ դիտարկում քաղաքական կոնտեքստում, քանի որ քաղաքականությամբ չեմ էլ զբաղվում, որպեսզի քաղաքական խնդիրներ տեսնեմ»: Այս մասին երեկ դատարանի բակում լրագրողների հետ զրույցում ասաց Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը՝ արձագանքելով այն դիտարկմանը, որ իր աջակիցների կարծիքով՝ կատարվողը քաղաքական հետապնդում է, քանի որ իշխանությունն ուզում է հողեր հանձնել, մինչդեռ Առուշանյանը խանգարող հանգամանք է:

Ինչ վերաբերում է պրոբացիայի ծառայության կողմից իրեն ազատազրկելու պահանջին իր գնահատականին՝ Առուշանյանը նշեց, որ կարծում է՝ իր արձագանքը սխալ է մեկնաբանվել:

«Հիմա էլ եմ ասում՝ պետական ցանկացած սուբյեկտի հանդեպ հարգանք ունեմ», -ասաց Առուշանյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՆՆԱԴԱՏԵԼ Է՝ ՊՈՒՏԻՆԻՆ ՉՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ուկրաինայի իշխանությունները քննադատել են Մոնղոլիայի կառավարությանը՝կապված ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցի հետ: Մասնավորապես, Ուկրաինայի արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Գեորգի Տիխին ասել է, որ Մոնղոլիան օգնում է Պուտինին խուսափել արդարադատությունից, գրում է Bild թերթը:

«Մոնղոլիայի կառավարության կողմից Պուտինի նկատմամբ ՄՔԴ-ի պարտադիր ձերբակալման հրամանը չկատարելը ծանր հարված է Միջազգային քրեական դատարանին եւ միջազգային քրեական իրավունքի համակարգին: Մոնղոլիան թույլ տվեց մեղադրյալ հանցագործին փախչել արդարադատությունից՝դրանով իսկ կիսելով նրա ռազմական հանցագործությունների պատասխանատվությունը:Մենք կհամագործակցենք գործընկերների հետ՝ երաշխավորելու, որ դա հետեւանքներ կունենա Ուլան Բատորի համար», - ասվում է Ուկրաինայի ԱԳՆ հայտարարության մեջ:

Վլադիմիր Պուտինը նախորդ գիշեր մեկնել էր Մոնղոլիա՝մասնակցելու Ճապոնիայի դեմ խորհրդային եւ մոնղոլական զինված ուժերի հաղթանակի 85-ամյակի տոնակատարություններին: Պուտինը վայրէջք է կատարել Մոնղոլիայի մայրաքաղաք Ուլան Բատորում: Սա նրա առաջին ուղեւորությունն է 2023 թվականից ի վեր մի երկիր, որը ստորագրել է Հռոմի ստատուտը եւ ընդունում է Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) իրավասությունը: 2023 թվականի մարտին ՄՔԴ-ն Վլադիմիր Պուտինին ձերբակալելու օրդեր է տվել:

ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սիրիայի եւ Թուրքիայի ԱԳՆ եւ ՊՆ ներկայացուցիչները ՌԴ-ի եւ Իրանի իրենց գործընկերների մասնակցությամբ կարող են բանակցությունների մեջ մտնել ամենամոտ ապագայում երկկողմ հարաբերությունների կարգավորման նպատակով: Այս մասին տեղեկացրել է արաբական դիվանագիտական աղբյուրը Al Watan թերթին: Նրա տվյալներով՝ պատվիրակությունների բանակցությունները կարող են տեղի ունենալ սեպտեմբերի վերջին: Աղբյուրը, սակայն, չի նշել դրանց անցկացման վայրի մասին:

Նրա տեղեկացմամբ՝գալիք հանդիպման ժամանակ կքննարկվի Դամասկոսի եւ Անկարայի միջեւ համագործակցության մեխանիզմի մշակումը ահաբեկչության դեմ պայքարում, ինչպես նաեւ սիրիական տարածքից օկուպացիոն թուրքական ուժերի դուրսբերման ժամանակացույցը:

Այս առնչությամբ Al Watan-ի աղբյուրը չի բացառել, որ բանակցությունների օրակարգում կարող է ներառվել Ադանայի 1998թ. համաձայնագրում ուղղումներ կատարելու հարցը, որը վերաբերում է երկկողմ փոխգործակցությանը սահմանների անվտանգության վերահսկման ապահովման համար:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԼՂ-Ն ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՄԵՆԱՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄՆ Է

2024 թվականի սեպտեմբերի 2-ին Արցախի Հանրապետության քաղաքացիական հասարակության շուրջ 50 կազմակերպություն դիմում է հղել Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության Գործող նախագահ Յան Բորգին: Փաստաթղթում, որը կրճատ ներկայացնում ենք ձեզ, մասնավորապես, ասվում է.



«Ինչպես Ձեզ հայտնի է, Արցախի/Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ իր ժողովրդի դեմ Ադրբեջանի լայնածավալ ռազմական ագրեսիայի արդյունքում 2020 թ. սեպտեմբերի 27-ից մինչեւ 2023 թվականի հոկտեմբերի 4-ը 150 հազար հայ ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի տակ ստիպված է եղել թողնել իր պատմական հայրենիքը, որտեղ հայկական մշակութային ժառանգությունը հազարամյակների պատմություն ունի: Ներկայումս Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքը Ադրբեջանի ռազմական ագրեսիայի, 10-ամսյա ամբողջական շրջափակման, էթնիկ զտման եւ այլ ցեղասպան գործողությունների արդյունքում բռնազավթված է:

Freedom House, International Partnership for Human Rights, Democracy Development Foundation, Helsinki Citizens' Assembly - Vanadzor, Protection of Rights without Borders NGO, Law Development and Protection Foundation & Truth Hounds կազմակերպությունների փաստահավաք առաքելությունը հաստատել է, որ բավականաչափ ապացույցներ կան եզրահանգելու, որ ադրբեջանական իշխանությունների եւ զինվորականների գործողությունները, ինչպես նաեւ այլ արարքները, որոնք արձանագրվել են Առաքելության զեկույցում եւ հրապարակվել «Ինչո՞ւ հայեր չկան Լեռնային Ղարաբաղում» վերնագրով, հանցագործություններ են համարվում Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի համաձայն, ներառյալ հոդված 7-ը/հանցագործություններ մարդկության դեմ/ եւ հոդված 8-ը/ռազմական հանցագործություններ/ եւ համապատասխանում են բնակչության արտաքսման եւ բռնի տեղահանման բնորոշմանը:

Վերոհիշյալ հանցավոր գործողությունների իրագործումից հետո եւ ձեռք բերված արդյունքները ամրագրելու նպատակով Ադրբեջանի ղեկավարությունը չի դադարեցնում ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման միակ, միջազգային մանդատով օժտված ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման փորձերը: Իր անօրեն մտադրություններին օրինականություն հաղորդելու համար ադրբեջանական կողմը ցինիկաբար Հայաստանից պահանջում է համատեղ դիմել ԵԱՀԿ՝ Մինսկի խումբը եւ դրան հարակից կազմակերպության մյուս կառույցները լուծարելու խնդրանքով: Միաժամանակ անտեսվում են հակամարտության ամենաշահագրգիռ կողմի՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի օրինական իրավունքները:

Ադրբեջանի նախագահը արդեն չորրորդ տարին է ինչ փորձում է միջազգային հանրությանը համոզել, որ Ադրբեջանը միակողմանի կարգով «ռազմական-դիվանագիտական» ճանապարհով լուծել է ղարաբաղյան հակամարտությունը, եւ այնպիսի հասկացություն, ինչպիսին Լեռնային Ղարաբաղն է, այլեւս գոյություն չունի...

...Միջազգային հանրությանն ուղղված Արցախի Հանրապետության քաղաքական եւ քաղաքացիական ուժերի 2023 թվականի դեկտեմբերի 9-ի դիմումի մեջ գնահատական է տրվել ստեղծված իրավիճակին եւ նշվել են հինգ անվիճարկելի պայմաններ՝ իր Հայրենիք մեր ժողովրդի խաղաղ, անվտանգ եւ արժանապատիվ վերադարձի համար: Վերահաստատում ենք, որ մենք մտադիր չենք հրաժարվել մեր սկզբունքներից, համոզմունքներից եւ սեփական Հայրենիքի նկատմամբ մեր իրավունքներից ոչ ուժի, ոչ բնաջնջվելու սպառնալիքի դեմ, ոչ աքսորի մեջ, ոչ որեւէ այլ ֆիզիկական եւ քաղաքական հանգամանքներում...

...Մինսկի գործընթացի հենց սկզբից Մխ բոլոր անդամ-երկրների կողմից անտեսվել է առանցքային մի հանգամանք՝ հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու պարտավորության խախտումը: Նման մոտեցումը Ադրբեջանի մոտ հիմնախնդրի ռազմական լուծման տրամադրություններ է խթանել...

...Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշմանը խոչընդոտելու, առավել եւս, հակամարտության կողմերի վրա ուժային ճնշումը շարունակելու դեպքում անհրաժեշտ է միջազգային քաղաքականության զինանոցից գործադրել այլ միջոցներ, այդ թվում՝ միջազգային պատժամիջոցներ...

...Մեկ անգամ եւս ընդգծում ենք՝ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կարգավորման ամենաշահագրգիռ կողմն է: Ադրբեջանը կոպտորեն խախտել է իր միջազգային պարտավորությունները եւ, օգտագործելով իր ռազմական գերազանցությունը, հասել է նաեւ նրան, որ Հայաստանի իշխանությունները հրաժարվել են պաշտպանել Արցախի ժողովրդի շահերը: Այսպիսով, Արցախի ժողովրդի իրավունքների ամբողջ համալիրի, այդ թվում նաեւ ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը միջազգային հանրության եւ, առաջին հերթին, ԵԱՀԿ խնդիրն է:

Հարգարժան պարոն Նախագահ, խնդրում ենք Ձեզ սույն դիմումը, որպես պաշտոնական փաստաթուղթ, տարածել ԵԱՀԿ Մշտական խորհրդում», - նշված է փաստաթղթում:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԸ՝ ԱՐՑԱԽ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

«Այսօր կանգնած ենք կորստյան իրականության մեջ, ինչն ինձ համար որոշակիորեն մեղքի պատճառով տեղի ունեցած իրականություն է»: Այս մասին «ԼՂՀ անկախության հիմնախնդիրն իրավական եւ քաղաքական հարթություններում» համաժողովի ժամանակ ունեցած ելույթում հայտարարեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը:

«Փորձ է արվում ապագայից զրկել, բացառել պայքարի հնարավորությունը, վերացնել պայքարի բոլոր հիմքերը: Այդ աշխատանքին առավելապես լծված է ՀՀ, այսպես կոչված, իշխանությունն իր «գլխավորով»: Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցնողը որեւէ կերպ չի անդրադառնում արցախցիների վերադարձի խնդրին եւ ընդհակառակը՝արցախցիների վերադարձը համարում է անիրատեսական:

Սրանից ավելի կազմաքանդող, արցախահայության իրավունքների համար պայքարն ուղղակիորեն մեծ հարվածի տակ դնող էլ ի՞նչ կարող է լինել: Նույնիսկ Ադրբեջանն, ինչ-որ ձեւականությունների ներքո, դարձյալ խոսում է վերադարձի մասին եւ այն չի բացառում, իսկ այս աթոռը զբաղեցնողը խոսում է միայն նման ձեւակերպումներից հրաժարվելու մասին»,- ասաց նա:

Նա նաեւ անդրադարձավ երեկ (խմբ.) հրապարակված Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանազատման հանձնաժողովների ստորագրած կանոնակարգին:

«Այդ փաստաթուղթն այն տեսքով, որով հրապարակվել է, եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ այն, ինչ կատարվեց Տավուշում, որեւէ կապ եւ առնչություն չուներ սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքների հետ, դա հայրենիքի միակողմանի հանձնում էր: Տավուշում զիջումներն արվել են մինչեւ այդ կանոնակարգի ստորագրումը, որը վկայում է, որ սա հակասահմանադրական հանցանք է»,- հավելեց նա:

ՀՀ-ՈՒՄ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԿՆՇՎԻ ՀԱՅՐԵՐԻ ՕՐԸ

ՀՀ-ում պաշտոնապես կնշվի Հայրերի օրը. օրենքի նախագիծը քննարկվել է առաջին ընթերցմամբ: Այս մասին տեղեկացնում են ԱԺ մամուլի ծառայությունից:

Կառավարության ներկայացուցիչ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանը, ներկայացնելով Կառավարության դրական դիրքորոշումը, նշել է, որ օրվա ընտրության վերաբերյալ կարելի է խորհուրդ հարցնել ազգագրագետներին:

Հանձնաժողովը դրական եզակացություն է տվել օրենքի նախագծին:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

ԳՈՒՅՔԻ ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Արաբկիր վարչական շրջանի ֆինչական բաժնում ավարտվել է 2010-2017 թթ. ընկած ժամանակահատվածում Ա.Ա.-ի կողմից խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով, ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություններ կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ ապացուցողական մեծածավալ գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ Ա.Ա.-ն նշված ժամանակահատվածում հափշտակել է քաղաքացիների կողմից բնակարաններ եւ ավտոկայանատեղիներ ձեռք բերելու դիմաց նրա տնօրինմանը, տիրապետմանը, օգտագործմանը հանձնված առանձնապես խոշոր չափերի գումարները, ինչպես նաեւ խարդախությամբ՝ խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով, կատարել է ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություններ:

Բացի այդ, Ա.Ա.-ն, խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով նպատակ ունենալով հափշտակել առանձնապես խոշոր չափերի գույք, իր իրական մտադրության մասին լռելով եւ տուժողին մոլորության մեջ գցելով՝ 2010 թ. հոկտեմբերին քաղաքացու հետ կնքելով առուվաճառքի նախնական եւ նախավճարի խառը պայմանագիր, պարտավորվել է Արաբկիր 43-րդ փողոցի թիվ 42/2 հասցեում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի 3 սենյականոց բնակարանը մասնակի հարդարմամբ մինչեւ 2012 թվականի մայիսի 1-ը հանձնել նրան, որի դիմաց 2010-2011թթ. վերջինիցս որպես կանխավճար ստացել է 34.000 ԱՄՆ դոլար գումար: Սակայն տարբեր պատճառաբանություններով, այդ թվում՝ քաղաքացուն դիտավորությամբ մոլորության մեջ գցելով, թե նշված բնակարանի նկատմամբ գրանցել է վերջինիս սեփականության իրավունքը, բայց նշվածի կապակցությամբ դիտավորությամբ որեւէ գործողություն չանելով, 2015թ. սեպտեմբերին հիշյալ բնակարանը կրկին վաճառել է այլ անձի՝ ՀՀ կադաստրի կոմիտեում գրանցելով վերջինիս սեփականության իրավունքը: Այդ կերպ խարդախությամբ քաղաքացուց հափշտակել է 12.500.000 ՀՀ դրամին համարժեք՝ 34.000 ԱՄՆ դոլար գումար:

Ա.Ա.-ն, մոլորության մեջ գցելով մեկ այլ քաղաքացու, 2008թ. ապրիլին վերջինիս հետ կնքել է անշարժ գույքի ապառիկ առուվաճառքի ձեւական պայմանագիր եւ ձեռք է բերել Երեւան քաղաքի Արաբկիր համայնքի Արաբկիր 43-րդ փողոցի թիվ 40/1 հասցեում գտնվող 17.1քմ մակերեսով օժանդակ շինության եւ 0,01216 հա մակերեսով հողամասի, Երեւան քաղաքի Արաբկիր համայնքի Արաբկիր 43-րդ փողոցի թիվ 40 հասցեում գտնվող 151.7քմ մակերեսով բնակելի տան եւ 0,01998հա մակերեսով հողամասի, ինչպես նաեւ՝ 0,00411հա մակերեսով ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը: Դրա դիմաց, ըստ պայմանագրերի, պետք է վճարեր 110.000.000 ՀՀ դրամ, սակայն վճարել է 67.440.000 ՀՀ դրամ, իսկ մնացած 42.560.000 ՀՀ դրամի փոխարեն խոստացել է հիշյալ տարածքների սեփականատիրոջը, սեփականության իրավունքով, տրամադրել Արաբկիր 43-րդ փողոցի թիվ 42/2 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից 2 բնակարան: Այնուհետեւ, վստահությունն ամրապնդելու նպատակով, հիշյալ անձին դիտավորությամբ մոլորության մեջ գցելով՝ 2010 թվականի մարտին վերջինիս հետ կնքել է անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր եւ խոստացել, որ պայմանագրով սահմանված 2 բնակարանները կտրամադրի նրան: Սակայն հետագայում դիտավորությամբ որեւէ գործողություն չանելով, հիշյալ հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի կառուցման ավարտից հետո, նշված բնակարանները վաճառել է այլ անձանց եւ այդ կերպ խարդախությամբ քաղաքացուց հափշտակել 42.560.000 ՀՀ դրամ գումար:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Ա.Ա.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով /յոթ դրվագ/ եւ 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով/երկու դրվագ/:

Դատարանի որոշմամբ ավելի վաղ Ա.Ա.-ի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը փոխվել եւ վերջինիս նկատմամբ որպես այլընտրանքային համակցված խափանման միջոցներ են կիրառվել՝ տնային կալանքը, գրավը՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով եւ բացակայելու արգելքը:

Ք.Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՔՆՆՎՈՒՄ Է ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ

Երեկ՝ սեպտեմբերի 3-ին, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում դատարանը վճռում է համայնքապետ Առուշ Առուշանյանի ճակատագիրը:

Հիշեցնենք, որ պրոբացիայի ծառայությունը դիմել էր Գորիս համայնքի ավագանուն՝ տեղեկացնելով, որ համայնքի ղեկավարը պետք է պաշտոնանկ արվի: Ավագանու նիստի մասնակից 14 անդամները միաձայն արձանագրել են, որ գրության պահանջն ավագանու գործառույթներից դուրս է, առկա է այդ գործընթացը ավագանու կողմից կազմակերպելու անհնարինության վիճակ:

Գորիսի համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը մեղադրվում է պաշտոնեական դիրքի չարաշահման, ինքնիրավչության, ինչպես նաեւ դիտավորությամբ այլ մարդու առողջությանը վնաս պատճառելու մեջ:

Դատական ակտը մտել է ուժի մեջ, բայց Առուշանյանը չի կատարում կետերից մեկը՝ հրաժարվել համայնքի ղեկավարի պետի պաշտոնից: Ըստ դատավճռի՝ նա չի կարող 5 տարի պաշտոն զբաղեցնել:

Իր հերթին պրոբացիայի ծառայությունը դիմել է դատարան՝ Առուշ Առուշանյանի պատիժը ազատազրկմամբ փոխարինելու հայցով:

Գործը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վարսենիկ Մելքոնյանի վարույթում է:

ՄԱՅՐԸ ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է 18–ԱՄՅԱ ԴՍՏԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ սեպտեմբերի 2-ին Կոտայքի մարզի Կաթնաղբյուր գյուղում ուշագրավ դեպք է եղել:

Մայրը տանը դանակով հարվածել է դստերը. 18-ամյա աղջկան «Աբովյան» հիվանդանոց են տեղափոխել:

Իրավապահները պարզել են, որ 40-ամյա Ա.Ռ-ն գինովցած վիճակում Կաթնաղբյուր գյուղի 2-րդ փողոցի իրենց տանը խոհանոցային դանակով հարվածել է իր 18-ամյա աղջիկ երեխային՝ Մ.Ղ-ին:

Իրավապահները քննություն են իրականացնում դեպքով:

Ք.Մ.

ԼՈՒՐԵՐ

ՀԵՂԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ՝ «ԱԲՈՎՅԱՆ» ՔԿՀ ՊԵՏ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով՝ Հեղինե Մարտիրոսյանը նշանակվել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետ:

2024թ. հունվարի 30-ից Հեղինե Մարտիրոսյանը «Աբովյան» ՔԿՀ պետի ժամանակավոր պաշտոնակատարն էր:

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԹԱՐԻՑ

Սեպտեմբերի 2-ին՝ ժամը 21:45-ին, «Մերսեդես» մակնիշի մեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 70,5-րդ կմ-ին բախվել է դիմացից ընթացող «Զիլ» բեռնատարի հետնամասին, ինչի հետեւանքով ուղեւորներից 10-ամյա Տինա Գ.-ն մահացել է տեղում, իսկ 3 ամսական Յուրի Գ.-ն՝ հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին: Այս մասին տեղեկացնում են ՆԳՆ-ից:

Վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Կատարվում է նախաքննություն:

ՄԵՐԺՈՒՄ

Արցախի Վանք գյուղից (Գանձասարից) բռնի տեղահանված Նարեկ Թեւոսյանի տնային կալանքի ժամկետը երկարացնելու՝ քննիչի միջնորդությունը մերժվել է: Այս մասին ֆեյսբուքյան էջում հայտնել է փաստաբան Ռուբեն Մելիքյանը:

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ՝ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնում ստացվել էին տեղեկություններ այն մասին, որ փորձ է արվելու դատապարտյալ Ա.Բ.-ին հանձնուքի միջոցով թմրանյութ փոխանցել: Այս մասին հայտնում են արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից:

Իրացնելով ստացված տեղեկությունները՝ նշված բաժնի ծառայողները Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Նուբարաշեն» տարածքային բաժնի ծառայողների հետ համատեղ սեպտեմբերի 2-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, զննության են ենթարկել դատապարտյալ Ա.Բ.-ի անվամբ քաղաքացուհի Կ.Ս.-ի կողմից բերված հանձնուքը:

Հանձնուքում առկա շոկոլադե կոնֆետներից երեքի մեջ ծառայողները հայտնաբերել են պոլիէթիլենով փաթեթավորված, թմրանյութի նմանվող զանգվածներ:

Քաղաքացուհի Կ.Ս.-ն ձերբակալվել է օպերատիվ ծառայողների կողմից եւ հայտնաբերվածի հետ միասին ներկայացվել ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 2-ից 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 83 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՆԽՆԱ ՀԱՏՈՒՄ ԵՆ ՍԵՎՔԱՐԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ

Իջեւան համայնքի Սեւքար գյուղից հայտնում են, որ գյուղում գործում են անտառահատման բրիգադներ, որոնք ամեն օր անտառ են գնում՝ ինչպես մշտական աշխատանքի վայր: Այդ բրիգադներում աշխատելու համար տեղացի բանվորներին օրական վճարում են 15 հազար դրամ, եթե նրանք փայտով բարձում է ն «ԳԱԶ-66» բեռնատար, 20 հազար դրամ, եթե բարձում են «ԿԱՄԱԶ» կամ «ԶԻԼ-131» բեռնատար: Այդ բրիգադները ամիսներով աշխատում են՝ անխնա հատելով անտառը: Անտառի հատումը կատարվում է իշխանության հետ կապված-ների հովանու ներքո: 2023 թվականին հայտնել ենք, որ Սեւքարի անտառատնտեսության փոխտնօրեն Անահիտ Հովսեփյանը, ով պայքարում էր ապօրինի հատումների դեմ, փայտի գործով զբաղվող Սեւքարի բնակիչն անտառտնտեսության շենքի մոտ ծեծի է ենթարկել: Նիկոլ Փաշինյանը, իշխանության գալով, իբրեւ թե պայքարում էր անտառհատումների դեմ: Իջեւանում ասում են, որ իրականում այդ պայքարը ուներ անտառահատումներով զբաղվողներին այդ գործից հանելու, այդ խիստ շահութաբեր բիզնեսը յուրայիններին հանձնելու նպատակ: 5 տարի առաջ՝2019թ. հուլիսին, ՀՀ քննչական կոմիտեն հայտարարություն տարածեց, որ 2019 թվականի հուլիսի 17-ին մի խումբ անձինք, ապօրինի ծառահատումների դեմ պայքարի խստացման հետ կապված իրենց դժգոհություններն արտահայտելու նպատակով, Իջեւան քաղաքում փակել են Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը բղավել, հայհոյել են, վնասել նշված խաչմերուկում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի թիթեղյա ծածկը, գործադրել բռնություն, որպես զենք օգտագործվող առարկաների՝ քարերի եւ մահակների գործադրմամբ, մարմնական վնասվածքներ են պատճառել ոստիկանության մի շարք աշխատակիցների: Հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 316-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով: Մի խումբ անձանց կողմից որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել էր 13 անձ, եւս 6 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էր ստորագրություն՝ չհեռանալու մասին: 2020 թ. հոկտեմբերի 28-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է վերոհիշյալ դեպքերի մասնակից, Իջեւան համայնքի 20 բնակչի դատավարությունը: Նրանց հոդվածը փոխվել, մեղմացվել է, նրանք բոլորը դատվում են քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով («Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ»: Գրեթե 4 տարի, ձգձգելով, անշտապ շարունակվում է այդ դատը. վերջին նիստն այս տարվա մայիսի 14-ին է եղել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԿԱՍՊԵՐՍԿԻ»

ԳՈՐԾԱՐԿԵԼ Է ԹՎԱՅԻՆ ՔՐԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹՐԵՅՆԻՆԳ

«Կասպերսկի» ընկերության տեղեկատվական անվտանգության փորձագետների առցանց թրեյնինգների պորտֆոլիոյում (Kaspersky Expert Training) հայտնվել է նոր ծրագիր՝ Windows digital forensics («Թվային քրեագիտություն Windows- ում»): Դրա օգնությամբ կարելի է զարգացնել թվային հանցանքների հայտնաբերման, մշակման եւ վերլուծության հմտությունները: Այն հարմար է ինչպես կազմակերպություններին, որոնք ձգտում են բարձրացնել միջադեպերին արձագանքման իրենց թիմերի որակավորումը, այնպես էլ տեղեկատվական անվտանգության առանձին փորձագետներին, որոնք ցանկանում են ընդլայնել իրենց իրավասությունները: Դասընթացը հասանելի է անգլերենով՝ ամբողջ աշխարհի մասնագետների համար:

«Կասպերսկի»-ի միջադեպերին արձագանքման թիմի տվյալներով՝ 2023-ին մոտավորապես յուրաքանչյուր հինգերորդ (21,8%) կիբեռհարձակումը տեւել է ավելի քան մեկ ամիս: Հայտնաբերման եւ արձագանքման ժամանակը կրճատելու համար ՏԱ մասնագետներին անհրաժեշտ են հմտություններ, որոնք նրանք կարող են ձեռք բերել «Կասպերսկի»-ի նոր թրենինգի շնորհիվ: Դրա շրջանակներում կսովորեցնեն հավաքել թվային ապացույցներ, հայտնաբերել վնասաբեր գործունեության հետքեր, օգտագործել Windows-ում արտեֆակտների ժամանակային նիշեր՝ միջադեպերի սցենարները վերակառուցելու համար, վերլուծել բրաուզերի եւ էլեկտրոնային փոստի պատմությունը: Մասնագետները կկարողանան նաեւ գործնական հմտություններ ձեռք բերել. դրա համար նախատեսված են պարապմունքներ մեկուսացված միջավայրում: Թրեյնինգն անցած մասնակիցները կկարողանան որոշել միջադեպերի մասշտաբները, հավաքել ապացուցողական բազա, վերլուծել լոգերը, ցանցային տրաֆիկը եւ օպերատիվ հիշողությունը, ստեղծել կոտրանքի ինդիկատորներ (Indicators of Compromise եւ IoC). «Ընկերությունները պետք է նախապես պատրաստվեն հնարավոր միջադեպերին՝ կիբեռգրոհների նկատմամբ դիմակայուն մնալու համար: Դրա համար անհրաժեշտ է կենտրոնացված կառավարել լոգերը եւ պահպանել դրանք երկար ժամանակ: Պետք է նաեւ պաշտպանել դրանք հնարավոր միջամտությունից, չարտոնված հասանելիությունից եւ պատահական կորստից: Կազմակերպությունները պետք է կարողանան անհրաժեշտության դեպքում փորձաքննություն անցկացնել: Մեր նոր թրեյնինգը թույլ է տալիս համոզվել, որ թվային քրեագիտությունը միջադեպերին արձագանքման գործընթացի կարեւոր մասն է, եւ ձեռք բերել գիտելիքներ, որոնք կօգնեն ավելի արագ հաղթահարել կիբեռգրոհները եւ զսպել դրանք, վերականգնել ընկերության ենթակառուցվածքը գրոհից հետո եւ նվազագույնի հասցնել հետեւանքները»,- մեկնաբանում է «Կասպերսկի» ընկերության համակարգչային միջադեպերին արձագանքման եւ հետազոտման խմբի ղեկավար Այման Շաաբանը (Ayman Shaaban), ով մշակել է թրեյնինգի ծրագիրը:

Է. Մ.

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Wildberries–Ի ՀԵՐԹԱԿԱՆ «ԱՆԱԿՆԿԱԼԸ»

Wildberries առեւտրային օնլայն հարթակը հերթական անգամ չի դադարում անակնկալներ մատուցել ցանցից օգտվողներին, սակայն ոչ միայն լավ անակնկալներ, այլեւ վատ:

«Ժողովուրդ» օրաթերթին քաղաքացիները ահազանգել են, որ վաճառվող ապրանքը զեղչված արժեքով՝ բավականին մատչելի է վաճառվում, սակայն վճարումներ անելուց հետո՝ ապրանքը տեւական ժամանակ իրենց չի հասնում:

Ահազանգած քաղաքացու խոսքով՝ օգոստոսի 6-ից մինչ օրս իրեն չի հասել իր գնած ապրանքը, որի համար վճարել է, իսկ խնդրի մասին բարձրաձայնելուց հետո էլ սպառիչ պատասխան չի ստանում:

ԱՆՆԱ ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԵԼ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱԲՄՆՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեից տեղեկացնում են, որ սեպտեմբերի 2-ի դրությամբ էլեկտրոնային հարթակով տաքսի ծառայություն մատուցող 20 հազար քաղաքացի պարզեցված ընթացակարգով արդեն իսկ գրանցվել է հարկային մարմնում:

Էլեկտրոնային հարթակների միջոցով՝ կանխիկ եւ անկանխիկ գործարքներով, վերջին տվյալներով 10 հազար վարորդի կողմից գեներացվել է շուրջ 150 հազար էլեկտրոնային ՀԴՄ կտրոն՝ մոտ 192 մլն դրամի չափով:

Տաքսի ծառայություն մատուցող անհատ վարորդների համար ՊԵԿ-ը մշակել է My tax բջջային հավելվածը: Այն մշակված է ինչպես Android, այնպես էլ iOS օպերացիոն համակարգերի համար եւ ներբեռնելիս պետք է փնտրել My tax Armenia անվանումով:

Հավելվածը բավականին պարզ է եւ հեշտ կիրառելի:

iOS օպերացիոն համակարգերի համար նախատեսված հավելվածն արդեն հասանելի է Apple App Store-ում՝ https://apps.apple.com/am/app/my-tax-armenia/id6633438781, իսկ Android-ի համար հավելվածը գտնվում է հաստատման փուլում:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 1-ից տաքսի ծառայությունների ոլորտում գործող նոր կարգավորումների համաձայն՝ ՀՀ տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ կարող են իրականացնել միայն այն կազմակերպությունները, որոնք անհատ ձեռնարկատեր են կամ ֆիզիկական անձ, որոնք միացել են ՊԵԿ համակարգին եւ տրամադրում են էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 2 մարդ զոհվել է, 16-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Ժողովուրդ» օրաթերթի 31.03.2023թ. թիվ 47 (2713) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) «Բի էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված «Հայաստանի զարգացման եւ ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ստորեւ նշված լոտերի աճուրդային փուլերը (որպես մեկ միասնական համալիր) շարունակվելու են 09.09.2024թ.-ին ժ.12:00-ին հոլանդական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին, նշված մեկնարկային գներից: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 5 փողոց, 1/1 հասցեում գտնվող 655,75 ք.մ. հին ձուլման արտադրամաս, 209,15 քմ փայտամշակման արհեստանոց, 15,3 քմ գազակարգավորիչ կայան, 301,65 քմ կիսակառույց պահեստ, 111,2 քմ ծածկ, 27,4 քմ /79,46 խմ/ պարիսպ, 6,18 քմ ինքնակամ շինություն եւ 0.4546 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14800000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5 հասցեում գտնվող 1882,1 ք.մ. վարչական շենք, 73,44 քմ ավտոտնակ, 150,45 քմ ջրավազան, 324,08 քմ զոդման արտադրամաս, 32,5 քմ ջրավազան, 4919,9 քմ մեխանիկական ցեխ, 147,4 քմ մազութի հոր, 84 քմ մազութի հոր, 400,22 քմ կաթսայատուն, 3217,2 քմ ձուլման արտադրամաս, 1489,6 քմ կենտրոնական պահեստ, 93,5 քմ կիսակառույց, 24,64 քմ ենթակայան, 644,6 քմ դարբնոց, 576 քմ գործիքային արտադրամաս, 8,5 քմ /17 խմ/ պարիսպ, 29,3 քմ /73,3 խմ/ պարիսպ, 85,5 քմ /256,5 խմ/ պարիսպ եւ 4,4457 հա հողամաս: Առկա են 69,17 քմ ինքնակամ կառուցված շինություններ՝ 48,9 քմ կիսակառույց, 5,77 քմ պահակատուն եւ 14,5 քմ պարիսպ: Լոտի մեկնարկային գինը՝ 303900000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5/1 հասցեում գտնվող 826,9 քմ կուլտուրայի տուն, 119,95 քմ անասնաշենք, 33,2 քմ /116,2 խմ/ պարիսպ, 21 քմ /16,8 խմ/ պարիսպ, 33,1 քմ /82,8 խմ/ պարիսպ եւ 0,5252 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝23200000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5/2 հասցեում գտնվող 990,1 քմ անավարտ պահեստ, 107,7 քմ պատրաստի արտադրանքի պահեստ, 17,1 քմ /51,3 խմ/ պարիսպ, 41,3 քմ /123,9 խմ/ պարիսպ եւ 0,3521 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝13800000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., 21 փողոց, 5/3 հասցեում գտնվող 592,2 քմ վարչական շենք, 960,21 քմ ջերմոց, 97,9 քմ /293,71 խմ/ պարիսպ, 4,2 քմ /12,6 խմ/ պարիսպ, 5,0 քմ ինքնակամ կառուցված պարիսպ եւ 0,7119 հա հողամաս:

Լոտի մեկնարկային գինը՝23700000 ՀՀ դրամ:

Ծանուցման մնացած դրույթները մնում են անփոփոխ:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԿՈՆՅԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐ ՉԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՎԵԼ

Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության նախարարը եւ ՌԴ անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության ղեկավարը հայկական կոնյակի հետ կապված որեւէ խնդիր չեն բարձրաձայնել: ՀՀ ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստին այս մասին ասաց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը՝ անդրադառնալով ռուսական լրատվամիջոցների այն հրապարակմանը, թե ռուսական խանութներում վաճառվող հայկական կոնյակի 90 տոկոսն անվտանգ չէ:

«Ես հեռախոսազրույց եմ ունեցել Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության նախարարի եւ ՌԴ անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության ղեկավարի հետ: Այդ երկու հեռախոսազրույցների ընթացքում տարբեր հարցեր ենք քննարկել, բայց մեր ռուսաստանցի գործընկերները կոնյակի սպիրտի մասին որեւէ բան չեն ասել: Ինձ չի ասվել որեւէ խնդրի մասին»,-ընդգծեց Պապոյանը:

«Հայաստանից պետք է արտահանվի իրապես կոնյակ եւ կոնյակի սպիրտ: Իմ օրակարգում այն շատ կարեւոր դերակատարում ունի: Ես անելու եմ ամեն-ինչ, որպեսզի վստահ լինենք, որ Հայաստանից դուրս եկող սպիրտը բացարձակապես խաղողի հումք ունի: Սա Հայաստանի բրենդի եւ հայկական կոնյակի բրենդի հարց է»,-ասաց Պապոյանը:

Հիշեցնենք, որ ՏԱՍՍ լրատվական գործակալությունը օգոստոսի 20-ին հայտնել էր, Ռուսական խանութներում վաճառվող հայկական կոնյակների գրեթե 90%-ն անվտանգ չեն, իսկ արտադրանքի մոտ կեսը պարունակում է ոչ խաղողի սպիրտ: Ինչպես գրել էր ՏԱՍՍ գործակալությունը, այս մասին ասված է «Անտիկոնտրաֆակտ» ասոցիացիայի եւ Ռուսաստանի կոնյակ, սպիրտ եւ ալկոհոլային խմիչք արտադրողների միության համատեղ հետազոտության մեջ:

Ուսումնասիրության համար ձեռք է բերվել հայկական 10 խոշորագույն արտադրողների ավելի քան 20 ապրանքային նշանի 200 նմուշ: Արտադրանքը ձեռք է բերվել Ռուսաստանի տարբեր առեւտրային ցանցերից եւ ուղարկվել է Գարեջրի, ոչ ալկոհոլային եւ գինու արդյունաբերության համառուսաստանյան գիտահետազոտական ինստիտուտի անկախ լաբորատորիա:

Թեստավորման արդյունքներով խախտումներ են հայտնաբերվել 177 նմուշներում, ինչը կազմում է ընդհանուրի 89%-ը: Արտադրանքի գրեթե կեսում հայտնաբերվել է ոչ խաղողի սպիրտ, ինչը հակասում է կոնյակի չափանիշներին: Միայն 23 նմուշ է լիովինհամապատասխանել նորմերին եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը:

Այդ կապակցությամբ «Անտիկոնտրաֆակտը» դիմել է ՌԴ գլխավոր դատախազություն, Դաշնային մաքսային ծառայություն եւ Ռոսալկոգոլտաբակոնտրոլ՝ Հայաստանից ներմուծվող կոնյակի նկատմամբ վերահսկողության միջոցներ ձեռնարկելու խնդրանքով՝ հաշվի առնելով, որ այն ներմուծվում է Վրաստանի տարածքով: Նամակներում նշվում է նաեւ, որ Հայաստանից ներմուծվող կեղծված արտադրանքը ստեղծում է անբարեխիղճ մրցակցություն եւ գների դեմպինգ, ինչը դժվար կացության մեջ է դնում ռուսաստանցի արտադրողներին եւ շուկայից դուրս մղելու վտանգ սպառնում:

«Անտիկոնտրաֆակտ» ասոցիացիայի գլխավոր տնօրեն Քրիստինա Սկրիպնիկը նշել է, որ հետազոտության արդյունքները ցնցել են մասնագետներին: Պարզվել է, որ նույն ապրանքանիշի շշալցման նույն ամսաթվով նմուշները կարող են համապատասխանել նորմերին, այլ ամսաթվով նմուշները՝ պարունակել ոչ խաղողային ծագման սպիրտ:

Ավելի ուշ ՍԱՏՄ իրազեկման, խորհրդատվության եւ հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ Անուշ Հարությունյանը՝ անդրադառնալով ՌԴ-ում «Անտիկոնտրաֆակտ» ասոցիացիայի եւ Ռուսաստանի կոնյակ, սպիրտ եւ ալկոհոլային խմիչք արտադրողների միության համատեղ հետազոտության արդյունքներին, որ Ռուսաստանից պաշտոնական նամակ չեն ստացել, չգիտեն՝ կոնյակի որ ապրանքանիշերի մասին է խոսքը:

Ա. Ս.

ՄԵԿՆԱՐԿ

ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՆ ՆՈՐ back-end ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐԻ

Ուսումնական ծրագիրը նախատեսված է առնվազն երկու տարվա փորձ ունեցող ծրագրավորողների համար: Ուսանողները հնարավորություն կունենան յուրացնելու ժամանակակից լավագույն մեթոդաբանությունները եւ կատարելագործելու back-end ծրագրավորման հմտությունները, մասնակցելու համակարգչային խոշոր, մասշտաբային ճարտարապետությունների ստեղծմանը եւ ցանկացած բարդության խնդիրների լուծմանը: Engineering Deep Dive ծրագիրն առաջին անգամ մեկնարկել է անցյալ տարի:

Ուսուցումը հայերեն է, առկա տարբերակով՝ երեկոյան ժամերին, հոկտեմբերից դեկտեմբեր:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ունի 26 տեղ, ուսուցումն անվճար է (վճարում է Yandex Armenia-ն), բայց պետք է անցնել քննությունն ու հարցազրույցը: Անցյալ տարի կազմակերպիչներն ավելի քան 700 հայտ են ստացել:

«Շատ հաճելի է, որ նախագիծը հաջող ընթացք ունեցավ, եւ մենք հավաքագրում ենք ուսանողների արդեն հաջորդ կուրսի համար: Ուրախալի է նաեւ, որ անցյալ տարվա շրջանավարտների մեծ մասն աղջիկներ էին, ինչը մեր երկրի համար հուսադրող ցուցանիշ է: Եվ, իհարկե, այս կրթական ծրագիրը հնարավոր չէր լինի իրականացնել, եթե չունենայինք Yandex Armenia-ի նման գործընկեր, որը գնահատում է կրթությունը եւ մշտապես իր ներդրումն է ունենում SS ոլորտի զարգացման գործում»,- ասում է ACA-ի համահիմնադիր եւ տնօրեն Նարեկ Ասլիկյանը:

Engineering Deep Dive ծրագրի թեմաներն են՝ ալգորիթմներն ու տվյալների կառուցվածքը, օբյեկտ կողմնորոշված վերլուծությունը, նախագծման օրինաչափությունները, կոդի վերաշակումը եւ այլն:

«Մեզ համար կարեւոր է աջակցել այնպիսի կրթական ծրագրերի, որոնք զարգացնում են մասնագետների թվային հմտությունները: Միայն այդ հմտություններով է հնարավոր երկրում ձեւավորել համապատասխան միջավայր, որտեղ կզարգանա թվային տնտեսությունը: Այլ կերպ ասած՝ մեր նպատակն է նմանօրինակ նախագծերի միջոցով նպաստել թվային տնտեսության զարգացմանը: Եվ, իհարկե, մենք միշտ ուրախ ենք հրավիրել շրջանավարտներին մեզ մոտ աշխատանքի»,- ասում է Yandex Armenia-ի ղեկավար Արամ Մխիթարյանը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՄԻՋԱՎԱՅՐ

Հունիսի 3-ից Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում մեկնարկել էր «Գրքերի աշխարհում» խորագրով կրթամշակութային ամառային ճամբարը:

Գրադարանի ամառային ճամբարն իր շուրջն էր համախմբել հայ մանուկներին՝ աշխարհի տարբեր երկրներից: Մայրաքաղաքից ու մարզերից ժամանած 6-12 տարեկան երեխաներին միացել էին այս տարի Հայաստանում ամռան արձակուրդներն անցկացնելու եկած երեխաները՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Բելգիայից, Բուլղարիայից եւ Իսպանիայից: Ամռան երեք ամիսների ընթացքում գրադարանային ճամբարին են միացել շուրջ 90 երեխա, իսկ հաճախումների թիվը կազմել է շուրջ 500:

Նոր գիտելիքներ, նոր ընկերներ

Կրթամշակութային առօրյայով հագեցած եռամսյա ճամբարը հնարավորություն է տվել երեխաներին ամառային արձակուրդներն անցկացնել արդյունավետ, ուսուցանող, հետաքրքիր եւ ուրախ միջավայրում: Այստեղ երեխաները ձեռք են բերել նոր գիտելիքներ ու ընկերներ:

Գրքեր, քննարկումներ, լեզուների ուսուցում, էթիկայի դասեր

Ճամբարի ծրագրի հիմնական շեշտադրումը գիրքն ու ընթերցանությունն էր: Զուգահեռաբար տեղի են ունեցել տարբեր գրքերի շուրջ քննարկումներ, որոնք միտված էին երեխաների վերլուծական, քննադատական մտքի զարգացմանն ու գրականության հանդեպ հետաքրքրության սերմանմանը: Երեխաները մասնակցել են նաեւ տարբեր դասընթացների ու միջոցառումների, ինտերակտիվ դասընթացների միջոցով զարգացրել են ռուսերենի եւ անգլերենի իմացության մակարդակը: Զարգացնող, ինտելեկտուալ խաղերի միջոցով մարզել են միտքը, ինչպես նաեւ սովորել էթիկայի կանոնները:

Աշխարհաճանաչողություն

Շրջապատող միջավայրը, աշխարհն առավել լավ ճանաչելու, հետաքրքիր եւ կարեւոր փաստեր իմանալու նպատակով՝ երեխաների համար անցկացվել են «Ես եւ շրջակա միջավայրը», «Աշխարհի շուրջ» թեմատիկ դասերը: Զրույցների միջոցով ընդլայնվել են երեխաների աշխարհայացքն ու մտահորիզոնը:

Հաղորդակցվել են արվեստի տարբեր ճյուղերին

«Արվեստի ժամ» դասի շրջանակում երեխաները զբաղվել են նկարչությամբ, երաժշտությամբ, թատերական արվեստով, ձեռագործությամբ, ասեղնագործությամբ, դիտել մուլտֆիլմեր, զարգացրել ստեղծագործական հմտությունները: Հեքիաթապատման դասերի ընթացքում ճամբարականները հեքիաթներ են ընթերցել եւ ստեղծել դրանց պատկերազարդումները: Նկարչության դասընթացների արդյունքում էլ ճամբարի մասնակիցները ստեղծել են հետաքրքիր աշխատանքներ: Նրանց ստեղծագործությունները ցուցադրվել են գրադարանի ցուցասրահում, այնուհետեւ համատեղ քննարկել են նկարչական աշխատանքների առանձնահատկություններն ու կիրառված տեխնիկաները:

Նախավարժանք, բակային խաղեր, շախմատ

Երեխաների համակողմանի զարգացման անհրաժեշտ պայմաններից է ֆիզիկական ակտիվությունը: Այս համատեքստում ամառային ճամբարի առօրյայի կարեւոր բաղադրիչներից էին նախավարժանքը, բակային աշխույժ, ուրախ խաղերը, հետաքրքիր եւ կենտրոնացում պահանջող շախմատի դասերը:

Այցելություններ մշակութային հաստատություններ

Ամառային ճամբարի ընթացքում երեխաներն այցելել են նաեւ մշակութային հաստատություններ, այդ թվում՝ Պատանի հանդիսատեսի թատրոն, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան: Գեղագիտական զարգացմանը զուգահեռ երեխաները ծանոթացել են նաեւ մշակութային հաստատություններ այցելելու վարքականոններին:

Ամառային հանգիստը՝ գրքերի աշխարհում

Հատկանշական է, որ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում կազմակերպված ամառային ճամբարը երեխաների համար դարձել է եզակի հնարավորություն ամառն անցկացնելու գրքերի աշխարհում՝ հետաքրքիր, ուրախ, ուսուցանող, ստեղծագործական միջավայրում:

Հավելենք, որ դպրոցական՝ աշնանային եւ գարնանային, արձակուրդներին եւս նախատեսվում են անցկացնել «Գրքերի աշխարհում» խորագիրը կրող կրթամշակութային ճամբարներ:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ մեկնարկում է մշակութային նոր նախագիծ: Հայաստանում առաջին անգամ կանցկացվի սիմֆոնիկ նվագախմբերի միջազգային փառատոն, որի շրջանակներում ելույթ կունենան հայաստանյան եւ արտերկրից հրավիրված անվանի երաժիշտներ, մենակատարներ եւ երաժշտախմբեր:

Թումանյանի անվան զբոսայգում սեպտեմբերի 17-ից 24-ը կայանալիք փառատոնի ընթացքում ելույթ կունենան Երեւանի քաղաքապետարանի «Երեւան» պատանեկան սիմֆոնիկ նվագախումբը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոնի նվագախումբն ու երգչախումբը, Սանկտ Պետերբուրգի Ֆիլհարմոնիայի աշխարհահռչակ ակադեմիական նվագախումբը եւ Լա Սկալա թատրոնի «Ակադեմիա» նվագախումբը:

Փառատոնային օրերին սիրով կսպասենք բոլորիդ՝ միասին վայելելու սիմֆոնիկ երաժշտության տոնախմբությունը:

ԳՐՔԻ 3-ՐԴ ՀԱՏՈՐԸ՝ 25 ԶԻՆՎՈՐԻ ՄԱՍԻՆ

Ժամանակակից Արվեստի թանգարանում սեպտեմբերի 1-ին կայացավ Մամիկոն Խուրշուդյանի հեղինակած «Հայրեններ 3» գրքի շնորհանդեսը, որին բազմաթիվ հյուրեր էին իրենց ներկայությամբ պատվել:

25 վիրավոր զինծառայողի մասին է գրել հասարակական գործիչ Մամիկոն Խուրշուդյանը, ով գիտի մեկ առ մեկ բոլոր զինվորների անցած դառը, բայց պատվաբեր ճանապարհի մասին: Կենդանի լեգենդները այնտեղ էին՝ տեսնելու եւ զգալու այն ջերմությունը, որ կար իրենց նկատմամբ:

Միջոցառման ժամանակ 3 մրցանակակիրներ պարգեւների արժանացան՝ «Հայրենների» կողքին լինելու համար.

Բժիշկ Ստյոպա Ասատրյանը

Մանկավարժ Վեներա Գյուլինյանը

Մանկավարժ Զեփյուռ Սարդարյանը

Մամիկոն Խուրշուդյանն իր խոսքում ասաց. «Մի տեսակ սառել ենք, անտարբեր ենք դարձել մեզ շրջապատող դժբախտությունների նկատմամբ: Բայց պատերազմը չի ավարտվել եւ դեռ չգիտենք, թե ինչ փորձություններ են մեզ սպասվում»:

Վիրավոր զինվորներն ողջունելու էին եկել ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը, ծանրամարտի աշխարհի չեմպիոն Նազիկ Ավդալյանը, «Ասալայի» հայտնի մարտիկ Վազեն Սիսիլյանը, ռեժիսոր Աիդա Հովհաննիսյանը, Հերոսի մահով ընկած Ալբերտ Հովհաննիսյանի հայրը եւ էլի շատերը:

Օրը հիշարժան էր եւ... Ծարունակելի:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՀԱՂԹԱՆԱԿՈՎ Է ՄԵԿՆԱՐԿԵԼ

Կատալոնական «Բարսելոնան» 2017/2018 մրցաշրջանից հետո առաջին անգամ չորս հաղթանակով է մեկնարկել Իսպանիայի Լա լիգայում, հայտնում է Opta-ն:

Հանս-Դիտեր Ֆլիկի գլխավորած թիմը հաղթել է «Վալենսիային» (2-1), «Աթլետիկին» (2-1), «Ռայո Վալյեկանոյին» (2-1) եւ «Վալյադոլիդին» (7-0):

«Բարսելոնան» նոր մրցաշրջանում Լա լիգայի միակ թիմն է, որը դեռ միավոր չի կորցրել: Իսպանիայի փոխչեմպիոնը 12 միավորով Լա լիգայի միանձնյա առաջատարն է:

ՀՀ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԽԱՂԱՑԱՆԿՆ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ

Սեպտեբերյան հանդիպումներին ընդառաջ՝ ներկայացնում ենք Հայաստանի հավաքականի խաղացանկը Ազգերի լիգայի խաղարկությունում:

Հայաստան/Լատվիա - սեմպտեմբերի 7, ժամը՝ 20:00

Հյուսիսային Մակեդոնիա/Հայաստան - սեպտեմբերի 10, ժամը 22:45

Ֆարերյան կղզիներ/Հայաստան - հոկտեմբերի 10, ժամը՝ 22:45

Հայաստան/Հյուսիսային Մակեդոնիա - հոկտեմբերի 13, ժամը 20:00

Հայաստան/Ֆարերյան կղզիներ - նոյեմբեր 14, ժամը 21:00

Լատվիա/Հայաստան - նոյեմբերի 17, ժամը 18:00

Նշենք, որ Հայաստանի հավաքականը Ազգերի լիգայի խաղարկությունում ընդգրկված է C լիգայի C4 խմբում Ֆարերյան կղզիների, Հյուսիսային Մակեդոնիայի եւ Լատվիայի հավաքականների հետ:

US Open

Աշխարհի առաջին ռակետ, իտալացի թենիսիստ Յաննիկ Սիները դուրս է եկել US Open 2024-ի քառորդ եզրափակիչ: Չորրորդ շրջանի խաղում նա հաղթել է ամերիկացի Թոմի Փոլին (14-րդ համարը ATP-ի դասակարգման աղյուսակում):

Հանդիպման վերջնական հաշիվը գրանցվել է 7:6 (7:3), 7:6 (7:5), 6:1: Այսպիսով, իտալացին դարձավ ընթացիկ մրցաշարի քառորդ եզրափակիչի վերջին մասնակիցը:

US Open 2024-ի քառորդ եզրափակիչի զույգերը.

Յաննիկ Սիներ (Իտալիա) - Դանիիլ Մեդվեդեւ (Ռուսաստան)

Ջեք Դրեյփեր (Մեծ Բրիտանիա) - Ալեքս դե Մինաուր (Ավստրալիա)

Թեյլոր Ֆրից (ԱՄՆ) - Ալեքսանդր Զվերեւ (Գերմանիա)

Գրիգոր Դիմիտրով (Բուլղարիա) - Ֆրենսիս Տիաֆո (ԱՄՆ)

Հիշեցնենք՝ տղամարդկանց մենախաղի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 75 միլիոն դոլար: Մրցաշարի գործող չեմպիոնը սերբ թենիսիստ Նովակ Ջոկովիչն է, որը նախորդ տարվա մրցաշարի եզրափակչում հաղթեց Դանիիլ Մեդվեդեւին:

● *Սեպտեմբերի 7-ին Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կբեմադրվի Պուչինիի «Տուրանդոտ» օպերան: Տոմսերի արժեքը՝ 5.000-15.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ստանալ վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա:
Սամվել Հովհաննիսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վիճակախաղերի կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է՝ «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 987-Ն որոշման համաձայն: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով), վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Հայտատուները վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 01.07.2004թ. թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հայտը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիցենզիա ստանալու համար տարեկան պետական տուրքը կազմում է 600 000 000 ՀՀ դրամ: Հայտատուն վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական գանձապետարանի 900005162137 հաշվեհամարին վճարում է 600 000 000 ՀՀ դրամ եւ կարող է լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնել:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն ապաստան հայցողները:
Սեդա Նավասարդյան (57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողները Հայաստանում ազատ տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ ունեն:

Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

ՀՀ միգրացիոն ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

««Կծեգ» Արցախի բարբառների հանրահռչակում» ծրագրի շրջանակում նախաձեռնվել է «Արա պա ստի պեն կինի՞» թատերական ներկայացումը: Ներկայացման առաջնախաղը տեղի կունենա սեպտեմբերի 9-ի ժամը 19:00-ին, Հայաստանի կինոգործիչների միության փոքր դահլիճում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	+11 + 16 +28 + 32
	Կոտայքի լեռներ	+10 + 16 +28 + 31
	Կոտայքի նախալեռներ	+20 + 23 +34 + 32
	Գեղարքունիք	+11 + 16 +25 + 28
	Լոռի	+14 + 18 +29 + 33
	Տավուշ	+18 + 22 +31 + 36
	Արագածոտնի լեռներ	+11 + 14 +17 + 20
	Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +27 + 31

	Արարատ	+23 + 25 +35 + 37
	Արմավիր	+20 + 22 +32 + 35
	Վայոց ձորի լեռներ	+11 + 14 +29 + 31
	Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23 +34 + 37
	Սյունիքի հովիտներ	+21 + 24 +33 + 37
	Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +30 + 32
	ԼՂՀ	+13 + 16 +29 + 31
	Երեւան	+25 + 27 +35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.9.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*